**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՏՈՒԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-25/2**

ք.Երևան «29» «10» 2025թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, գործելով Հայաստանի Հանրապետության անունից, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղար՝ Տիգրան Իգիթյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Մեգնա» ՍՊ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Էմիլ Տարասյանի, գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 24.07.2025թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.16 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1. Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 23.10.2025թ.-ի «Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեի մասին» օրենքում վերաբաշխում, փոփոխություն, լրացում, ՀՀ կառավարության 2024թ.-ի դեկտեմբերիի 27-ի N 2060-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1494-Ն որոշումը, որով հատկացվել է 263.400.000 ՀՀ դրամ՝ բանտարկյալների տեղափոխման թվով 12 (տասներկու) ավտոմեքենաների ձեռքբերման համար, կողմերը որոշեցին՝ հաստատել Պայմանագրի N2 հավելվածը՝ «Վճարման ժամանակացույց»-ը, նոր խմբագրությամբ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N1-ի:

1.2 Սույն Համաձայնագրով Վաճառողը պարտավորվում է, Պայմանագրով սահմանված պահանջներով՝ Գնորդին մատակարարել բանտարկյալների տեղափոխման 12 հատ ավտոմեքենաներ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը և իր N1 հավելվածը կազմված են 2 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն | «Մեգնա» ՍՊԸ |
| ք. Երևան, Արշակունյաց-63 | Ք. Երևան, Աճառյան 42 |
| ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Բանկը՝ «Արդշինինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900011041564 | Հ/Հ 2481000888680077 |
| ՀՎՀՀ 02204739 | ՀՎՀՀ 00083019 |
| ՔԿ ծառայության գլխավոր քարտուղար | Գլխավոր Տնօրեն՝ |
| Տ. Իգիթյան | Է. Տարասյան |
| (ստորագրություն) | /ստորագրություն/ |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված N 1*
*« 29 » « 10 » 2025 թ. կնքված N 1 Համաձայնագրի*
*ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԲՄԱՊՁԲ-25/2 ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայություն | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝ | | | | |
| | | | 1-ին եռամսյակ | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ | Ընդամենը |
| 1 | 34111250/502 | Բանտարկյալների տեղափոխման ավտոմեքենաներ | - | - | - | 263400000 | 263400000 |

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

**ԳՆՈՐԴ**
ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011041564
ՀՎՀՀ 02204739
ՔԿ ծառայության
գլխավոր քարտուղար
Տ. Իգիթյան

(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Մեգնա» ՍՊԸ
Ք. Երևան, Աճառյան 42
Բանկը՝ «Արդշինինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2481000888680077
ՀՎՀՀ 00083019
Գլխավոր Տնօրեն՝
Է. Տարասյան

/ստորագրություն/
Կ.Տ